ԵԿԷՔ ԱՆՑՆԵՆՔ ԱՅՆ ԿՈՂՄԸ

Ո՞րն է ամենասարսափելի փոթորիկը, որով դուք երբևէ անցել եք:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՄԱՐ. 4:35-40

*35 Եւ այն օրն, երբ որ իրիկուն էր լինում, նորանց ասեց. **Եկէք անցնենք այն կողմը:** 36 Եւ ժողովրդին թողեցին, ու նորան որ նավի վրա էր, վերցնելով հեռացան. Եւ ուրիշ նավակներ էլ կային նորա հետ: 37 Ուժեղ փոթորիկ եղավ, և ալիքները նավի մեջ էին թափվում. նավը գրեթե ջրով էր լցվել: 38 "Հիսուսը նավի հետևի մասում բարձի վրա քնած էր: Նրան արթնացրին ու ասացին. «Վարդապե՛տ, քեզ հոգ չէ՞, որ կորչում ենք»: 39 Եւ նա զարթնելով քամիին սաստեց, եւ ասեց ծովին. Լռիր, պապանձվիր. Եւ քամին դադարեց, եւ մեծ խաղաղություն եղավ: 40 Եվ նրանց ասաց. «Ինչո՞ւ եք այդքան վախկոտ, ինչո՞ւ հավատ չունեք»: Եւ նորանք մեծ վախով վախեցան, եւ իրար ասում էին. Սա ո՞վ է արդեօք. Որ քամին էլ ծովն էլ հնազանդվում են սորան:*

Մարկոսը այժմ մեզ հայտնում է չորս հրաշքներ, որոնք ցույց են տալիս Քրիստոսի Աստվածային զորությունը և ավելի շատ ապացույցն այն բանի, որ Հիսուսն իսկապես Աստծո Որդին էր:

- ***Մարկոսը պատրաստվում է ցույց տալ մեզ Հիսուսի զորությունը բնության վրա (Մարկոս 4:35-41),***
- ***Նրա զորությունը դևերի վրա (Մարկոս 5:1-20),***
- ***Նրա զորությունը հիվանդության վրա (Մարկոս 5:21-34),***
- ***Եվ իշխանություն մահվան վրա (Մարկոս 5:35-43):***

I. ԵԿԷՔ ԱՆՑՆԵՆՔ ԱՅՆ ԿՈՂՄԸ
LET US GO OVER TO THE OTHER SIDE

35 Եւ այն օրն, երբ որ իրիկուն էր լինում, նորանց ասեց. Եկէք անցնենք այն կողմը:

- ***Լավ առողջության «մյուս կողմը» հիվանդությունն է: Ինչպե՞ս կարձագանքեք: Ձեր հավատքը փորձվելու է «այն կողմից»:***
- ***Մեղրամսի «այն կողմը» խզված հարաբերություններն են: Ինչպե՞ս կարձագանքեք: Ձեր հավատքը փորձվելու է «այն կողմից»:***

Ուշադիր լսեք, կյանքում փոթորիկները կարող են ջրի երես հանել այն, ինչ իրականում կա ձեր ներսում: Փոթորիկները ձեզ կբացահայտեն՝ դուք վախո՞վ եք ապրում, թե՞ հավատքով: Փոթորիկները կբացահայտեն ձեզ, եթե ձեր սիրտը լի է վստահությամբ կամ կասկածով: Այն, թե ինչպես ենք մենք արձագանքում Աստծուն փոթորկի ժամանակ, բացահայտում է մեր մասին ճշմարտությունը՝ անկախ նրանից՝ մենք դա ուզում ենք, թե ոչ:

II. ՓՈԹՈՐԻԿՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԱՌԱՋԱՆԱԼ
STORMS CAN HAPPEN SUDDENLY

37 ***Ուժեղ փոթորիկ եղավ, և ալիքները նավի մեջ էին թափվում. նավը գրեթե ջրով էր լցվել:***

Մարկոսը նկարագրում է այս իրադարձությունը որպես ,կատաղի փոթորիկե այնքան, որ ,ալիքները ներխուժեցին նավը, և այն սկսեց լցվել ջրովե: Իսկ Մատթեոսը նկարագրում է այս իրադարձությունը, որ ,ալէկոծումե առաջացավ (Մատթ. 8:24): Այս բառը գալիս է հունարեն seismos բառից, որից էլ մենք ստանում ենք երկրաշարժ բառը: Մատթեոսի համար ծովը ցնցվում էր:

*Մատ. 8:24 - Եւ ահա մեծ **ալէկոծում** եղաւ ծովի մէջ, որ նաւն էլ ծածկվում էր ալիքներիցը. եւ ինքը քնած էր:*

Հով. 16:33 - Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին:

III. ՓՈԹՈՐԻԿՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՌՆԱԼ, ՈՐ ԴՈՒՔ ԿԱՍԿԱԾԵՔ ԱՍՏԾՈՒՆ:
STORMS CAN CAUSE YOU TO DOUBT GOD

38 ***...«Վարդապե՛տ, քեզ հոգ չէ՞, որ կորչում ենք»:***

- ***Փոթորիկները գալիս են մեր կյանքում երկու նբատակով:***

  Ապաշխարության – Հովնան

- ***Քո կանչի և հոգևոր կյանքի դեմ***

  Գործ. 27:23-26 - 23 Որովհետեւ այս գիշեր երեւեցաւ ինձ այն Աստուծոյ հրեշտակը՝ որ ես նորանն եմ եւ որին էլ պաշտում եմ. 24 Եւ ասեց. Մի վախենար, Պօղոս. Պէտք է քեզ՝ Կայսեր առաջին կանգնես. Եւ ահա Աստուած շնորհել է քեզ այդ բոլոր քեզ հետ նաւողները: 25 Սորա համար սրտապինդ կացէք, ով մարդիկ. որովհետեւ հաւատում եմ Աստուծուն, որ այսպէս կ'լինի ինչպէս ինձ հետ խօսեց: 26 Բայց պէտք է մի կղզի ընկնենք:

ԱՄՓՈՓՈՒՄ

- ***Երբ դու դուրս գաս փոթորիկից, դու այլևս չես լինի այն նույն մարդը, ով ներս մտավ: Ահա թե ինչի մասին է փոթորիկը: Դու ուրիշ կերպ կտեսնես Հիսուսին և այլ կերպ կտեսնես ինքդ քեզ:***

- ***Կան որոշ բաներ, որոնք դուք կարող եք սովորել միայն փոթորկի ժամանակ:***

- ***Ոչ բոլոր փոթորիկներն են գալիս ձեր կյանքը խաթարելու համար, ոմանք գալիս են ճանապարհը մաքրելու: Որոշ փոթորիկներ օգնում են ձեզ ավելի պարզ տեսնելու համար:***